ՀՀԿ 9-րդ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

17 դեկտեբերի 2005թ.

1. Համագումարի պատվիրակների գրանցում
2. Համագումարի բացում
3. Հաշվիչ հանձնաժողովի քարտուղարության ընտրություն
4. Համագումարի օրակարգի հաստատում
5. ՀՀԿ խորհրդի նախագահի հաշվետու զեկուցում
6. Վերստուգիչ հանձնաժողովի նախագահի հաշվետու զեկուցում
7. Ելույթներ
8. ՀՀԿ կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման ընդունում
9. ՀՀԿ նախագահի թեկնածուների առաջադրում
10. ՀՀԿ խորհրդի անդամների թեկնածուների առաջադրում
11. ՀՀԿ վերստուգիչ հանձնաժողովի անդամների թեկնածուների առաջադրում և հաստատում
12. Ընդմիջում, ՀՀԿ նախագահի և խորհրդի անդամների ընտրության անցկացում և արդյունքների հրապարակում
13. ՀՀԿ խորհրդի նիստ, ՀՀԿ նախագահի տեղակալների և հանձնաժողովների նախագահների ընտրություն
14. ՀՀԿ նախագահի ելույթ

Համագումարի փակում

ՀՀԿ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ 9-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Հարգելի հյուրեր, սիրելի պատվիրակներ

Այս տարվա ապրիլի 2-ին, ձեզանից շատերին կուսակցության ներկայացուցչական ժողովում առիթ ունեցա շնորհավորելու մեր կուսակցության հիմնադրման 15 ամյակի կապակցությամբ, և քանի որ մեր հոբելյանական տարին դեռ շարունակվում է, թույլ տվեք մեկ անգամ ևս ջերմորեն շնորհավորել բոլորիս՝ մաղթելով անձնական և քաղաքական նորանոր ձեռքբերումներ և հաջողություններ:

Մեր երկրում գործող ցանկացած հասարակական-քաղաքական միավորում, պետական կամ ոչ պետական կազմակերպություն իր գործունեության ընթացքում պարտավոր է հետևել այն նպատակներին ու սկզբունքներին, որին ծառայեցնում է իր գաղափարական և աշխատանքային ողջ ներուժը: Ես խորապես համոզված եմ, որ մեզանում գործող բոլոր առողջ ուժերի համար, գործունեության առաջնահերթությունները պայմանավորվում են մեր պետության և հասարակության առաջնային շահերով և խնդիրներով:

Կուսակցության վերջին ներկայացուցչական ժողովում մենք մանրամասն անդրադարձանք կուսակցության 15-ամյա ուղուն և այժմ կրկին անգամ մանրամասնել հարկ չեմ համարում:

Պետք է արձանագրենք, որ մեր հերթական համագումարից հետո, ինչպես այն ժամանակ հույս էինք հայտնել, երկրում հաջողվել է պահպանել ներքաղաքական կայունություն, ապահովել տնտեսական աճի շարունակականությունը և թույլ չտալ, որպեսզի քաղաքական իրադարձությունները, այդ թվում՝ ներքաղաքական բազմաբնույթ զարգացումները էական ազդեցություն ունենան տնտեսության վրա՝ վտանգելով տարբեր ոլորտներում դժվարությամբ ձեռքբերված առաջընթացը:

Անցնող երկու տարիների ընթացքում, կուսակցությունը շարունակել է տարածքային կազմակերպությունների և կառուցվածքային ստորաբաժանումների կայացման ու ամրապնդմանն ուղղված աշխատանքները: Մարզային խորհուրդների բնականոն գործունեության շնորհիվ ամրապնվել են միջկառույցային կապերն ու համագործակցությանն ուղղված ջանքերը: Կուսակցության կառուցվածքային ստորաբաժանումների մեծ մասի համար ապահովվել են գործունեության անհրաժեշտ պայմանները: Տարածքային կազմակերպություններում ձևավորված գաղափարա-քարոզչական, կանանց, երիտասարդական և կազմակերպչական հանձնախմբերը ընթացիկ տարվա ընթացքում արդեն իսկ տեղերում հանդես են եկել իրենց գործառույթներից բխող ծրագրերով և ակտիվ գործունեությամբ: Հարկ է ընդգծել կուսակցության գաղափարական աշխատանքի տեսանկյունից արվածը ևս: Այստեղ նկատելի է դրական տեղաշարժ: Կարող ենք ասել, որ այդ նպատակին են հաջողությամբ ծառայել 2003թ-ից լույս տեսնող «Հանրապետական» պաշտոնաթերթը, կուսակցության նախաձեռնությամբ և միջոցներով հրատարակված «Ազգայնական» մատենաշարը, Ցեղակրոնությանը, Տարոնականությանը, Գարեգին Նժդեհի և Հայկ Ասատրյանի կյանքին ու գործին նվիրված, ազգային, հոգևոր, այլ թեմաներով մեկ տասնյակից ավելի քննական-վերլուծական գրքույկները, միջոցառումները:

Մեր գաղափարախոսությունը հանրության շրջանում տարածելու, արմատավորելու առումով զգալի աշխատանք է տարվել, և այն պետք է շարունակական լինի, սակայն, դրանից բացի, անհրաժեշտ է կուսակցության որդեգրած գաղափարները կյանքի կոչելու միջոցները, մեթոդները ակտիվորեն գործի դնել և արդյունք ունենալ: 2004թ.-ին տպագրվեց նաև Հայկ Ասատրյանի «Հատընտիր» աշխատությունների հոդվածների ժողովածուն: Մարտի 28—ին մեծ շուքով նշվեց կուսակցության հիմնադիր նախագահ, երջանկահիշատակ Աշոտ Նավասարդյանի ծննդյան 55 ամյակը, Սիսիան քաղաքում բացվեց Աշոտ Նավասարդյանի կիսանդրին, իսկ Երևանի դպրոցներից մեկն անվանակոչվեց նրա անունով:

Հայաստանի Հանրապետական կուսակցությունը մեծ ուշադրություն է դարձնում իր կուսակցական կադրերի վերապատրաստման և առաջխաղացման գործընթացին: 2004թ. ընթացքում կուսակցությունը տարբեր վերապատրաստման դասընթացների միջոցով կարողացել է վերապատրաստել թվով 1000-ից ավելի կուսակցականների՝ հիմնականում երիտասարդ անդամների: Նշեմ, որ նմանատիպ դասընթացները բավականին աշխուժություն են մտցրել ներկուսակցական կյանքում, և կարծում եմ, որ դրանք հետագայում շարունակական կդառնան կուսակցության բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության ծրագրերում:

Կուսակցությունը մշտապես հանդես է եկել երիտասարդությանը խրախուսելու և առաջ մղելու գործունեությամբ:

Այսօր հանրապետական կուսակցության երիտասարդական կազմակերպությունը հանդիսանում է Հայաստանում գործող ամենաակտիվ կազմակերպություններից մեկը: Իր 15-ամյա գործունեության հաշվետվությունը բոլորովին վերջերս ներկայացվեց և կարծում եմ, որ մեր երիտասարդ գաղափարակից ընկերները չեն սահմանափակվելու առկա ձեռքբերումներով, հետագայում ևս կարողանալու են արժանապատիվ կերպով շարունակել երիտասարդական դաշտում ծավալած գործունեությունը:

Համոզված եմ, որ կուսակցականաշինության ներկա գործընթացում, նախատեսված ծրագրերի շնորհիվ մենք հետագայում ևս կարող ենք հանդես գալ ազդեցիկ քաղաքական ուժի դիրքերից՝ ապահովելով մեր հասարակության քաղաքական համակարգի բնականոն կայացման և զարգացմանն ուղղված խնդիրների իրագործումը:

Կոալիցիայի շրջանակներում մենք շարունակելու ենք ակտիվ աշխատել՝ համատեղ ծրագրի իրականացման հարցում: Երեք կուսակցություններն էլ վերցրել են պատասխանատվություն և՛ ԱԺ-ի և կառավարության գործունեության համար: ԱԺ-ն «օրինաց երկրինը» չէ և կառավարությունն էլ Հանրապետականինը չէ:

Որպես հետևողական և իրատեսական ծրագրերով առաջնորդվող կուսակցություն, Հանրապետականը հաշվետու ժամանակաշրջանում, ստանձնած պատասխանատվության և պետության հնարավորությունների շրջանակներում ձեռնմուխ է եղել իր նախընտրական ծրագրի իրականացմանը: Ե՛վ գործադիրում, և՛ օրենսդիրում մենք ունենք երկրի ամենատարբեր ոլորտներում առկա հիմնախնդիրների լուծմանն ուղղված ձեռքբերումներ և ընթացիկ ծրագրեր, որոնք հաջորդ ընտրություններում նոր ծրագրերի ու նպատակների համար ամուր նախադրյալներ են հանդիսանալու:

Կառավարության աշխատանքը եղել է բավականին թափանցիկ, հրապարակային. ամեն տարի նախարարները ինչպես կառավարությանը, այնպես էլ զանգվածային լրատվամիջոցներով հանրությանը ներկայացրել են իրենց կատարած աշխատանքները, չկատարած հանձնարարականները և դրանց պատճառները: Այդ ամենն այժմ կրկին մանրամասնելու, ոլորտ առ ոլորտ ներկայացնելու հարկ, կարծում եմ, չկա:

ԱԺ-ում ևս հանրապետականները բավականին ակտիվ են գործել՝ հեղինակելով ու նաև որպես համահեղինակ հանդես գալով մեծ թվով մայր օրենքների, նախաձեռնելով մի շարք օրենքներում փոփոխություններ, հստակեցումներ ու լրացումներ: Խորհրդարանում չունենալով բացարձակ մեծամասնություն՝ Հանրապետական պատգամավորները մշտապես կարողացել են ԱԺ-ի մյուս քաղաքական ուժերի հետ համագործակցել և հենարան լինել կառավարությանը, աջակցել գործադիր իշխանության ծրագրի իրագործմանը: Մեր պատգամավորները լայնորեն ներգրավված են եղել և ակտիվ գործել են նաև ԱԺ մշտական հանձնաժողովների, աշխատանքային խմբերի, խորհրդարանական պատվիրակությունների կազմում:

Գործնականում ապավինելով կատարվող աշխատանքներին, մենք միշտ բարձրաձայնել ենք, որ պետության և հասարակության կյանքում կան խնդիրներ, որոնք վեր են կուսակցական և խմբային շահերից: Ըստ այդմ՝ պետության կողմից իրականացվող խնդիրները, կախված դրանց առաջնայնությունից, կարող է փոխվել զարգացման տարբեր փուլերում, իսկ գործունեությունը պետք է հիմնված լինի ազգային, զարգացման ծրագրերի, անվտանգության հայեցակարգերի վրա, որոնք պետք է հստակ սահմանեն այդ գործունեության նպատակներն ու դրանց հասնելու միջոցները:

Մենք հայտարարել ենք, որ պատրաստ ենք մեր ազգային և պետական շահերից ելնելով համագործակցել ինչպես տարածաշրջանի, այնպես էլ այլ պետությունների հետ՝ և՛ քաղաքական, և՛ տնտեսական, և՛ ռազմական ոլորտներում: Մենք գտնում ենք, որ պետությունը վարում է հավասարակշռված քաղաքականություն՝ Եվրամիության, ՆԱՏՕ-ի, Եվրախորհրդի, ԱՊՀ-ի անդամ երկրների, ինչպես նաև այլ միջազգային կազմակերպությունների հետ: Մենք ընդունում ենք Թուրքիայի հետ հարաբերությունների բարելավման անհրաժեշտությունը՝ առանց նախապայմանների:

Անհրաժեշտ է գիտակցել, որ հարաբերությունները պետք է լինեն հավասարության, յուրաքանչյուրիս շահերը պաշտպանելու սկզբունքի վրա: Բարեկամական

հարաբերությունները պետք է գործերով ապահովվի և ամրապնդվի, այլ ոչ լոկ ցանկություններով:

Մեր կուսակցության կողմից առաջարկված ծրագրերը եղել են հստակ և նպատակային, ուղղված լինելով հասարակության լայն զանգվածների սոցիալ-տնտեսական, հոգևոր մշակութային պահանջմունքների բավարարմանը: Մենք միանշանակ վստահ ենք, որ մեր գործունեության բազմաբնույթ դրսևորումների առանցքում ընկած է երկրի տնտեսության զարգացումը, որի արդյունքում պետք է ապահովվի մեր օրերի թերևս համազգային կարևորագույն գաղափարը, այն է՝ ապահովել հայ մարդու, Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացու արժանապատիվ կյանքն ու կենցաղը: Վերջին հաշվով մենք, որպես գաղափարական կուսակցություն, պարտավոր ենք գործել, ելակետ ունենալով մարդկային և ազգային արժանապատվության գիտակցումը:

Հանրապետական կուսակցությունը, ելնելով իր գաղափարական հիմնադրույթներից, բազմիցս առիթ է ունեցել հանրությանը ներկայացնելու իր մոտեցումները Արցախյան հիմնախնդրի լուծման վերաբերյալ:

Այն է՝

1. Պետք է միջազգայնորեն ճանաչվի Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը
2. ԼՂՀ-ն չպետք է լինի Ադրբեջանի ենթակայության ներքո
3. Պետք է ապահովվի ԼՂՀ-ի բնակչության և սահմանների անվտանգությունը
4. ՀՀ-ն և ԼՂՀ-ն պետք է ունենան ընդհանուր սահման
5. ԼՂՀ հարցի կարգավորումը չպետք է տեղի ունենա ՀՀ սահմանների փոփոխման հաշվին
6. Հարցի խաղաղ կարգավորման գործընթացում ԼՂՀ-ն պետք է հանդես գա որպես բանակցային կողմ:

Ղարաբաղյան խնդրի՝ այս սկզբունքների վրա հիմնված լուծման գլխավոր երաշխիքը Հայաստանի Հանրապետության դինամիկ զարգացումն ու ներքին ամրությունն է: Մենք ողջունում ենք ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերը և Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների երկխոսությունը: Հուսով ենք, որ նրանց աշխատանքները դրականորեն կանդրադառնան տարածաշրջանում խաղաղության ամրապնդման վրա: Իսկ լուծումները պետք է լինեն այնպիսին, որ մեր հասարակության լայն շերտերի համար լինեն ընդունելի:

Մեր կուսակցությունը, տարբեր հասարակական-քաղաքական ուժերի հետ մեկտեղ ակտիվորեն մասնակցել է սահմանադրական բարեփոխումների մշակման աշխատանքներին:

Նոյեմբերի 27-ի սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի անցկացումով երկիրը մտավ զարգացման նոր փուլ, որով առաջադրված բարեփոխումները նախատեսվում են հանրային կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Դրանց արդյունքներն աստիճանաբար զգալու է մեր երկրի յուրաքանչյուր քաղաքացի: Իսկ դրան հասնելու համար, նախևառաջ պետք է երկրում գործող օրենսդրությունն ամբողջությամբ համապատասխանեցնել փոփոխված սահմանադրական նորմերին և պահանջներին, և հետևողական լինել դրանց կյանքի կոչման ու լիարժեք իրականացման գործում:

Անշուշտ, հանրաքվեն, որպես համապետական ընտրության յուրօրինակ գործընթաց, իր տարբեր փուլերում գրանցեց և' առաջընթաց, և' որոշակի շեղումներ: Սահմանադրական փոփոխությունների նախագծի քննարկումների և հանրության իրազեկման ժամանակ, փորձեր էր արվում խեղաթյուրել այն, խուսափել առարկայական քննարկումներից, բանավեճը տեղափոխել քաղաքական այլ հարթություն, այն է իշխանափոխության՝ ընդդիմություն-իշխանություն առճակատման: Քաղաքական ուժերի կողմից իշխանության ձգտումը բնական է, սակայն դրա համար ժողովրդավարական հասարակություններում կա մեկ օրինական ճանապարհ՝ դա խորհրդարանական և նախագահական համընդհանուր ընտրությունները են, որին շատ ժամանակ չի մնացել:

Հանրաքվեն կայացած է: Ընդհանուր առմամբ համապատասխանում է միջազգային չափանիշներին և արձանագրված խախտումները չեն ազդում հանրաքվեի արդյունքերի վրա: Ուստի անընդունելի ենք համարում համապետական կարևորություն ունեցող միջոցառումը ստվերող ցանկացած դրսևորում: Իսկ եղած փաստերը հարկավոր է մանրազննին ուսումնասիրել, համապատասխան հետևություններ անել և եթե կան մեղավորներ՝ ապա վերջիններս օրենքի սահմաններում պետք է ենթարկվեն պատասխանատվության:

2005թ. ՀՀ քաղաքական համակարգի համար կարևոր իրադարձություն է համարվել նաև տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքների ղեկավարների և ավագանիների ընտրությունները: Ինչպես միշտ, Հանարապետական կուսակցությունը մեծ ուշադրություն է դարձնում ՏԻՄ ընտրություններին և գաղտնիք չէ, որ բավականին ակտիվ մասնակցություն ունեցանք այդ գործընթացին: Կարող եմ ասել, որ ընդհանուր առմամբ, արդյունքները գոհացուցիչ են, իսկ ընտրություններում եղած հաջողությունը մեզ համար անչափ կարևոր էր, քանի որ դա առաջին հերթին կուսակցության և ժողովրդի միջև եղած կապի, վստահության ամրապնդման վկայությունն է: Այդ հաջողությունները հիմնականում պայմանավորված էին այն հանգամանքով, որ մեր քաղաքական-կուսակցական տասնհինգամյա

գործունեության ընթացքում, համատեղ ուժերով կարողացանք ամրապնդել կուսակցության տարածքային կազմակերպությունները: Այս ամենը երկարատև և նպատակային աշխատանք է, որի արդյունքում այսօր մենք ունենք գաղափարակիցների ընդլայնված շարքերով կուռ բանակ, որոնք գաղափարախոսության տարածման ուղղությամբ լայն աշխատանքներ տանելով հանդերձ կարողանում են ապահովել կուսակցության կառուցվածքային ստորաբաժանումների միջև արդյունավետ համագործակցությունը՝ իրականացնելով կուսակցության ծրագրերով ստանձնած պարտավորություններն ու առաջադրանքները:

Յուրաքանչյուր ՏԻՄ ընտրություն հանդես է գալիս որպես այդ ինստիտուտի կայացմանն ուղղված մի մեծ քայլ: Ուրախությամբ պետք է արձանագրենք, որ այս տարի բավականին մեծ էր մղումը ավագանու ընտրությունների մասնակցության առումով, իսկ սա նշանակում է, որ հասարակության կողմից զգալիորեն կարևորվում է վերջինիս դերը: Տեղական ինքնակառավարման մարմինների դերն ու նշանակությունը էապես բարձրացվեց նաև երկրի մայր օրենքի բարեփոխումների միջոցով, ինչն անմիջականորեն ուղղված է այդ ինստիտուտի կայացմանն ու զարգացմանը, որտեղ մեր կուսակցությունն ունի իր ուրույն դերակատարումը:

ՏԻՄ ընտրությունների վերբերյալ ներկայացնեմ որոշ ցուցանիշներ, ակնկալելով, որ դրանց մանրամասներն իր զեկույցում կներկայացնի պրն Ռուբեն Թադևոսյանը:

Մինչ 2005թ. ՏԻՄ ընտրությունները, Հանրապետական կուսակցության անդամ էին 384 համայնքների ղեկավարներ, մոտ երեք տասնյակ քաղաքապետեր և մայրաքաղաքի համայնքների ղեկավարներ, ավելի քան 400 ավագանու անդամներ:

Այժմ հանրապետական կուսակցության անդամ համայնքապետերի թիվը 444 է, քաղաքապետների և երևանի համայնքապետերինը՝ 32, իսկ ավագանու անդամների թիվ գերազանցում է 500-ը:

Բնականաբար երկրում տեղի ունեցող քաղաքական զարգացումների շարունակականությունը ենթադրում էր, որ մենք ՏԻՄ ընտրությունները դիտարկեինք նաև որպես նախապատրաստական փուլ հաջորդ խորհրդարանական ընտրությունների համար: Այդ իսկ պատճառով ՏԻՄ ընտրություններում մենք ձգտում էինք ապահովել նաև նոր, պատրաստված կադրերի առաջադրման և նրանց աջակցելու աշխատանքները: Բնականաբար կային համայնքներ, որտեղ ակամայից անհասկանալի էր թվում երկու կամ երեք հանրապետական թեկնածուների միջև ծավալվող պայքարը, սակայն պետք է նշեմ, որ կուսակցության տարածքային կազմակերպությունների մոտեցումներն այդ առումով արդարացված էին, որովհետև հնարավորություն էին տալիս ընտրության արդյունքում ունենալ տվյալ համայնքի մեծամասնության աջակցությունը վայելող արժանի համայնքապետ:

Քիչ չեն այն համայնքները, որտեղ մեր կուսակցության կառույցները պաշտպանել են անկուսակցական թեկնածուների, քանի որ նպատակը արաժանի և վստահություն ունեցող անձանց ընտրությունն էր: Այս ամենի կողքին կան նաև պարտություններ, որոնցից համապատասխան հետևություններ են արվել՝ ընդգծելով թերությունները և բացթողումները: Կարծում եմ, որ առաջին հերթին անհրաժեշտ է կարևորել այն, որ ՏԻՄ ընտրություններն անցան առանց խախտումների և ունեցան խաղաղ ընթացք: Իսկ առանձին դեպքերը չէին կարող ստվեր գցել ողջ ընտրական գործընթացի վրա, սակայն պարտավորեցնում են հաջորդիվ չկրկնելու և հետագայի համար առկա թերացումները շտկելու հրամայականը:

Սիրելի կուսակից ընկերներ.

Կատարվածի կողքին մենք ունենք նաև բացթողումներ, դեռևս չավարտված աշխատանքներ, որոնք տեղ են գտնելու հետագա մեր ծրագրերում և անելիքներում: Քաղաքական պայքարում ձեռքբերումները, հատկապես երբ հանդես ենք գալիս իշխող կոալիցիայի դիրքերից, ծանր ու դժվարին աշխատանքի արդյունք է, և միայն հետևողականությունն ու նպատակային գործունեությունն է, որ մեզ հնարավորություն է տալու ներկայանալ որպես առողջ քաղաքական ուժ: Մենք պարտավոր ենք քայլել ժամանակի պահանջներին համապատասխան, յուրաքանչյուր խնդիր ծառայեցնելով մեր երկրի ու հասարակության շահերին: Համոզված եմ, որ հետագա պայքարի համար մենք էլ ավելի համախմբված ենք լինելու մեր գաղափարների շուրջ: Դա մեզ հնարավորություն է տալու ժողովրդավարական ուղիով առաջ շարժվող մեր երկրում արձանագրել որակական

նոր առաջընթաց, սերունդների համար ապահովելով ամուր ու կայուն զարգացող երկիր ունենալու և արժանապատվորեն նրա վաղվա օրը կառուցելու հստակ երաշխիքները:

Շնորհակալություն.

ՀՀԿ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ՀՀԿ 9-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Հարգելի՛ պատվիրակներ

Մեր 9-րդ համագումարը հրավիրված է փաստորեն 2005 թվականի ավարտին և նախընտրական տարվա շեմին: Սակայն կարևոր է արձանագրել, որ այս առաջիկա տարին՝ 2006 թվականը, սովորական նախընտրական տարի չի լինելու մեր բոլորի համար և հատկապես մեր երկրի համար: Ինչո՞ւ: Որովհետև արդեն մոտ 15 տարի է՝ 2006 թվականին կլրանա մեր պետության 15-ամյակը, և ժամանակն է ամփոփելու այն ամենը, ինչ մենք արել ենք, ինչի հասել ենք, որտեղ բացթողումներ ենք ունեցել, ինչ սխալներ ենք արել, և անհրաժեշտ են որակական ճշգրտումներ մեր ուղու հետ կապված:

Սա միայն մեր երկրին չի բնորոշ: Բոլորիս տեսանելի է, որ նախկին խորհրդային կամ սոցիալիստական ճամբարի երկրները աստիճանաբար հստակեցնում են իրենց տեղն ու դիրքը աշխարհում: Եվ բնական է, որ չնայած այն բանին, որ մենք ունեցել ենք առանձնահատուկ դժվարություններ՝ անկախության վերահաստատումից ընդամենը մի քանի տարի առաջ սահմռկեցուցիչ երկրաշարժը, ապա պատերազմը և այլն, ունեցել ենք իսկապես առանձնահատուկ դժվարություններ, սակայն միևնույնն է՝ մենք ևս պիտի կարողանանք ամփոփել այն ճանապարհը, որ մենք անցել ենք այս 15 տարիների ընթացքում, և պիտի կարողանանք վերջնականորեն հստակեցնել մեր երկրի տեղն ու դերը համաշխարհային հանրության մեջ:

Այս տեսակետից առաջիկա ընտրությունները՝ 2007-2008 թվականների ընտրություններն ունեն առանձնահատուկ նշանակություն, որովհետև և՛ այդ ընտրություններին մոտենալու ճանապարհին կատարված աշխատանքների առումով, և՛ ընտրությունների որակով, ի վերջո, գնահատվելու է հենց Հայաստանի տեղը:

Բայց մինչ ընտրությունների խնդրին անդրադառնալը՝ շատ կարևոր է մեկ բան. մենք անհրաժեշտություն ունենք իսկապես մեր ինքնությունը հստակեցնելու: Ցավոք սրտի, անցած 15 տարիներին նաև այդ առումով կորուստներ ենք ունեցել: Այն արժեհամակարգը, որը մեզ համար հարազատ է, մերն է, դարերով եկել է, մեր ժողովուրդը նաև մեր սերնդին է փոխանցել, ցավոք սրտի, անցած այս տարիների ընթացքում, նաև օբյեկտիվ դժվարությունների պատճառով, խաթարվել է: Եվ այսօր մենք հստակեցնելու կարիք ունենք՝ ո՞րն է մեր արժեհամակարգը, որտե՞ղ է մեր տեղն ու դիրքը աշխարհում, ո՞րն է այն միջազգային ասպարեզը, որը մեր արժեհամակարգի համար կլինի ներդաշնակ, որտեղ Հայաստանը կլինի ապահով և կունենա զարգացման առավել լայն հնարավորություններ ու կօգտագործի այդ հնարավորությունները՝ ի շահ մեր երկրի ու ի բարօրություն մեր ժողովրդի:

Ահա այս մեծ ընտրության հետ կապված՝ մենք անելիքներ ունենք առաջիկա մի քանի տարիների ընթացքում: Ինչո՞ւ մի քանի տարիների ընթացքում: Որովհետև ընդհանուր գործընթացները, որոնք այս հարթության մեջ են, մոտենում են իրենց ավարտին: Եվ այստեղ հետ մնալը Հայաստանի համար կարող է լինել ճակատագրական:

Ինչպե՞ս մենք պիտի մոտենանք այս խնդրին: Մեկ հարցադրման մասին ես արդեն ասացի, որը չափազանց կարևոր է և, ցավոք սրտի, տարիներ շարունակ դուրս է մնացել ուշադրությունից: Դա մեր ինքնության հստակեցումն է, ընդ որում՝ գիտական հստակեցումը, ընդ որում՝ քաղաքական մեր ճանապարհի հստակեցումն է: Ես ուզում եմ պարզություն մտցնել. բնականաբար, նկատի չունեմ, որ մեր երկիրը պիտի իր կուրսը կտրուկ փոխի, սրա մասին չէ խոսքը, բայց հարաբերությունների հստակեցումը, այն ասպարեզի, որը կլինի առավել ներդաշնակ մեր աժեհամակարգի հետ, այդ ասպարեզի վերջնական հստակեցումը իսկապես անհրաժեշտություն է մեր երկրի համար:

Եվ այս ճանապարհին, կարծում եմ, իսկապես շատ կարևոր էին սահմանադրական փոփոխությունները: Սակայն չմոռանանք, որ երկու կարևոր խնդիր կա՝ սահմանադրական փոփոխությունների հետ կապված: Նախ առաջինը՝ երկրի հիմնական օրենքի փոփոխությունը, դրանով իսկ երկրում ստեղծելու համար այն հիմքերը, որ հնարավորություն կտային լիարժեքորեն գործելու և՛ պետական կառավարման համակարգին, և՛ հատկապես բազմակուսակցական քաղաքական

համակարգին, և՛ դատական համակարգին, և՛ տեղական ինքնակառավարման համակարգին:

Սակայն, սրանից բացի, մենք ունեինք նաև մեկ այլ խնդիր: Այո՛, առաջին խնդիրը իսկապես հաջողությամբ լուծվեց, այլևս անդարձ է այս ճանապարհը: Երկրորդ խնդիրը, ցավոք սրտի, ստվերվեց: Սա վերաբերում է ընտրական գործընթացների անցկացմանը: Ցավոք սրտի, մենք այս անգամ էլ չկարողացանք լիարժեքորեն, առանց որևէ թերության անցկացնել ընտրական գործընթացը: Անշուշտ, այստեղ իր նշանակությունն ունեցավ այն հանգամանքը, որ մեր գործընկերները ընդդիմությունից չգտնվեցին իրենց բարձրության վրա, և, ցավոք սրտի, երկրի համար նման կարևորագույն խնդրի պարագայում նույնպես դրսևորեցին և՛ անհետևողականություն, և՛ չկարողացան, ի վերջո, վեր կանգնել հատվածական շահերից: Սա, իհարկե, փաստ է: Ցավոք սրտի, շատ ցավալի փաստ է, որովհետև բազմակուսակցական համակարգի ամեն մի հատվածի թերությունն ու դժվարությունը ակնհայտորեն թերություն ու դժվարություն է բոլորիս համար, ամբողջ բազմակուսակցական համակարգի համար: Երբեք մենք չենք չարախնդացել ընդդիմության մեր գործընկերների թերությունների ու թուլությունների վրա: Սակայն, դժբախտաբար, ակնհայտորեն երևաց, որ մարդիկ չեն կարողանում գոնե այնպիսի հարցերում, որոնք ներքաղաքական պայքարի հետ որևէ առնչություն չունեն, այնպիսի հարցերում, որոնք երկրի ապագան են որոշում, վեր կանգնել իրենց հատվածական շահերից:

Սակայն սա հաստատագրելով, ես կարծում եմ, մենք պիտի նայենք, թե մենք արդյո՞ք արել ենք, նկատի ունեմ իշխանությունների մեջ գտնվող կուսակցությունները, արդյո՞ք արեցինք ամեն ինչ, որ իսկապես անթերի լինեին այդ ընտրությունները: Խնդիրը միայն ընտրությունները չեն: Ի վերջո, դժբախտաբար, այսօր շատերը հարց են տալիս՝ մի՞թե Հայաստանը չի կարող նման գործընթաց լիարժեքորեն գոնե մեկ անգամ կազմակերպել: Սա ընդհանուր քաղաքական մոտեցման խնդիր է և ոչ թե սոսկ մեկ ընտրության խնդիր, կամ այդ ընտրության ժամանակ այս կամ այն թվով մասնակից կամ կողմ ու դեմ ունենալու խնդիր: Սա կարևորագույն հարց է, և այս հարցի լուծման հետ կապված, կարծում եմ, չպիտի հասներ բանն այնտեղ, որ մեզ տարբեր կազմակերպություններ ու երկրներ, ակնհայտորեն իրենց դրական վերաբերմունքն արտահայտելով սահմանադրական փոփոխությունների նկատմամբ, սակայն ասեին, որ՝ գիտե՞ք, հարգելի՛ բարեկամներ, սրա վերջը պիտի գա, 2007 և 2008 թվականների ընտրություններն այլ որակ պիտի ունենան: Մենք իրավունք չունենք թույլ տալու, որ մեր երկրի վրա ստվեր ընկնի: Ի վերջո, մենք ունենք բավարար լծակներ, համոզված եմ, մեր բաժին

պատասխանատվությունը լիարժեքորեն կրելու, այնպես, ինչպես բազմաթիվ հարցերի հետ կապված՝ կրել ենք: Ե՛վ իրավունք ունենք, և՛ պարտականություն ունենք ապահովելու և ցույց տալու, որ մեր ժողովուրդը, մեր երկիրը, այո՛, ընդունակ են անթերի ընտրական գործընթացներ իրականացնելու:

Սակայն խնդիրը միայն ընտրական գործընթացները չեն, ցավոք սրտի, և միայն բազմակուսակցական համակարգի արատներն ու հիվանդությունները չեն: Մեկուկես տարվա, արդեն անգամ երկու տարվա աշխատանքը կոալիցիոն ֆորմատում, ես կարծում եմ, լուրջ վերանայումների անհրաժեշտություն ունի, որովհետև պատասխանատվությունը երկրի ապագայի նկատմամբ պահանջում է նաև համապատասխան հարաբերություններ կոալիցիայի ներսում: Սա չափազանց կարևոր խնդիր է, և ահա այստեղ է, որ մենք պիտի կարողանանք մի կողմից մեր վճռական խոսքն ասել որպես և՛ կոալիցիայի ներսում, և՛ ընդհանրապես խորհրդարանում ակնհայտ մեծամասնություն ունեցող կուսակցություն: Եվ մյուս կողմից՝ մենք պիտի կարողանանք դրանից բխող մեր պատասխանատվությունը լիարժեքորեն կրել: Այո՛, իսկապես, ես համաձայն եմ պարոն Մարգարյանի հետ, որ մեր գործընկերները խորհրդարանում աշխատել են լավ, աջակցել են և՛ կառավարության բերած նախագծերին, և՛ մեր նախագծերն են եղել ոչ քիչ, սակայն, հարգելի՛ հանրապետականներ, մենք ավելին պիտի անենք, Հանրապետական կուսակցությունը չպիտի երբեք նախաձեռնությունը զիջի խորհրդարանում: Մենք ունենք բացարձակ թվով, մյուսների համեմատ, պատգամավորներ, և դա պիտի երևա ամեն մի հարցի քննարկման ժամանակ: Հանրապետական կուսակցությունը պիտի լինի խորհրդարանում եղանակ ստեղծողն ու թելադրողը: Եվ մարդիկ պիտի տեսնեն, որ իսկապես հարցադրումները, որոնք արվում են, արվում են մեր կուսակցության կողմից: Պատասխանատվությունը, որ միշտ վերցրել ենք և տարել ենք որպես բեռ, պիտի շարունակենք տանել: Բայց միաժամանակ մեր դերակատարությունը խորհրդարանում պիտի համապատասխան լինի և՛ մեր ներուժին, և՛ պիտի համապատասխան լինի այն աշխատանքին, որ մենք անում ենք և՛ խորհրդարանում, և՛ խորհրդարանից դուրս: Մենք թևակոխում ենք չափազանց կարևոր մի շրջան, և այստեղ մենք պիտի կարողանանք է՛լ ավելի մոբիլիզացնել մեր ուժերը, և այստեղ մենք պիտի կարողանանք իսկապես Հանրապետական կուսակցությանը համարժեք դերակատարություն ունենալ քաղաքական գործընթացներում:

Մյուս խնդիրը, որ էլի չափազանց կարևոր է: Մենք տարածքային կազմակերպություններում մեր աշխատանքները պիտի էապես ակտիվացնենք: Այստեղ մեկ հիմնական հարցադրում կա, որ միշտ տարածքային կազմակերպությունների մեր ընկերներն անում են. ի՞նչ պիտի անենք: Ես կարծում եմ՝

պատասխանը շատ պարզ է. պիտի իսկապես բոլոր տարածքային կազմակերպությունների և սկզբնական կազմակերպությունների ղեկավարները լինեն այն մարդիկ, որոնք մեծ հեղինակություն են վայելում, որոնք եռանդուն են, գործունյա են, և որոնք կարող են և՛ պատասխանատվությունը վերցնել, և՛ կուսակցությանը պարզերես անել, և՛ կուսակցության առաջ դնել այն խնդիրները, որոնք տարածքներում գոյություն ունեն: Սա է պարզ բանաձևը: Մենք ունենք 400-ից ավելի համայնքների ղեկավարներ: Մի՞թե ակնհայտ չէ, որ ընտրությունները հենց բացահայտում են այն մարդկանց, որոնք առավել հեղինակություն են վայելում և որոնք ավելի գործունյա են: Եվ այս առումով, կարծում եմ, պիտի մարդիկ, որոնք կուսակցության անդամ են և միաժամանակ նման պատասխանատու դիրքերում են գտնվում, նրանք նաև պատասխանատու դերակատարություն ստանձնեն կուսակցության տեսակետից: Սա չափազանց կարևոր է: Որովհետև իսկապես աստիճանաբար քաղաքական պայքարը փոխվում է, բայց կուսակցությունն իրավունք չունի զիջելու իր դիրքերը: Ի վերջո, մենք տարիներ շարունակ բավականին ծանր, քրտնաջան աշխատանքի շնորհիվ աստիճանաբար մեծացրել ենք և՛ մեր դերակատարությունը քաղաքական կյանքում, և՛ մեր մասնակցությունը խորհրդարանում: Եվ կուսակցության այս հեղինակության ու դերակատարության անշեղ վերելքը մենք այսօր իրավունք չունենք ինչ-որ ձևով հարցականի տակ դնելու: Հետևաբար անհրաժեշտ է իսկապես լուրջ հետևություններ անել՝ էլ ավելի մեծացնելու համար մեր դերակատարությունը, էլ ավելի համապատասխանեցնելու համար մեր կատարած աշխատանքը այն կերպարին, որով մենք ներկայանում ենք: Անհրաժեշտ է լուրջ աշխատանք, լուրջ վերանայումներ թե՛ տարածքային կազմակերպությունների աշխատանքի տեսակետից, թե՛ խորհրդարանում մեր կատարած աշխատանքի տեսակետից:

Եվ վերջինը:

Ինչպես գիտեք, մեր երկրի գործունեությունը, տարբեր խնդիրների հետ կապված, որոնք առնչվում են արտաքին հարաբերություններին, ցավոք սրտի, էլի փորձ արվեց այս վերջին շրջանում ստվերելու:

Զարմանալի մի բան կա իսկապես: Մարդկանց մեջ, որոնք հաճախ քաղաքական ասպարեզում փորձում են որպես լիդերներ ներկայանալ, մարդկանց մեջ ինչ-որ մազոխիստական մի բան կա: 17 տարի շարունակ, Ղարաբաղյան խնդրի հետ կապված, եղել է բավականին ծանր ու դժվարին պայքար, լինի դա մարտի դաշտում, թե այս խաղաղության վերջին տասը տարիների ընթացքում: Եվ առաջին անգամ միջազգային հանրությունը արձանագրում է, որ Լեռնային Ղարաբաղի հարցում պետք է կիրառվի ինքնորոշման իրավունքը: Կարծում եմ, որևէ ողջամիտ

մարդ չի կարող այլ կերպ հասկանալ, քան իսկապես էական հաջողություն: Մենք միշտ երազել ենք դա: Մեզ ասում են՝ բայց ինչո՞ւ են ասում, որ եթե միանգամից միացնում եք Հայաստանին, ուրեմն մենք կճանաչենք Հայաստանը ագրեսոր: Բայց մի՞թե մեզ չի բավարարելու, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ճանաչվի որպես անկախ պետություն, մի՞թե դա չենք մենք երազել 88 թվականից սկսած այս պայքարի ամբողջ ընթացքում և անգամ դրանից առաջ: Եվ այս պարագայում, երբ մարդիկ նորից չեն ուզում ակնհայտը տեսնել, երբ նորից աղավաղում են և ինչ-որ անհեթեթություններ են սկսում տարածել Մեղրիի մասին ու էլի չգիտեմ ինչի, սա իսկապես անհասկանալի մի հոգեբանություն է: Երբ այդ ամենը արդեն միջազգային փաստաթղթերում է արձանագրվում, և հունվարին ընդունված այդ բանաձևում արձանագրվեց, ավելի ուշ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն արձանագրեց, որ, այո՛, ազգերի ինքնորոշման իրավունքը Լեռնային Ղարաբաղի խնդրի վերաբերյալ պետք է ճանաչվի որպես կիրառման կարևոր սկզբունք: Ավելին, ակնհայտորեն դրանով Լեռնային Ղարաբաղի խնդիրն առանձնացվեց մնացած հակամարտություններից. այն, ինչին մենք արդեն մոտ երկու տասնամյակ է՝ ձգտում ենք, այն, ինչ մենք երազել ենք: Եվ այս պարագայում այդ ամենը չտեսնել, փորձել էլի ստվերել, փորձել ուղղակի այն, ինչ արվում է, ներկայացնել սև գույնով, սա չի մեր երկրի ապագան:

Բայց ամեն մեկն ինքն է որոշում իր անելիքը: Եվ որպեսզի որևէ մեկն իսկապես չկարողանա կատարված աշխատանքի վրա ստվեր նետել, ես կարծում եմ, մեր անելիքը շատ պարզ է լինելու: Մենք էլ ավելի մեծ եռանդով պիտի աշխատենք 2006-ին, 2007-ի առաջին կեսին և կատարած աշխատանքով պիտի գնանք ընտրության, կատարած աշխատանքով պիտի ներկայանանք մեր հասարակությանը: Եվ ես կարծում եմ, որ և՛ կուսակցության գործերը կլինեն լավ, այնպես, ինչպես եղել են տարիներ շարունակ, և՛ որ ամենակարևորն է՝ մեր երկիրը, մեր ժողովուրդը իսկապես կարձանագրի լուրջ հաջողություններ, իսկապես մեր ժողովրդի կյանքում, ամեն մեկի անձնական կյանքում, ամեն մեկի ընտանիքում որակական փոփոխություններ կլինեն: Մի բան, որի իրականացումը մեր բոլորի պարտքն է:

Շնորհակալություն:

ՀՀԿ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ՀՀ ԱԺ «ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ 9-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետական կուսակցությունը Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովում ներկայացված է 43 պատգամավորներով, որոնք ընդգրկված են Ազգային Ժողովի բոլոր 6 մշտական հանձնաժողովում, ներկայացված են բարեկամական, պատգամավորական և պածտոնական պատվիրակությունների բոլոր խմբերում:

«Հանրապետական» պատգամավորական խմբակցությունը գործում է քաղաքական կոալիցիայի շրջանակներում:

Պետք է արձանագրենք, որ ըստ էության, խորհրդարանում լինելով ամենամեծ խմբակցությունը՝ հանրապետականը խորհրդարանական գործառույթներում ապահովում է իր վճռորոշ դերակատարումը: Ակնհայտորեն, թե՛ օրենսդրական նախաձեռնությունների վերլուծությունները, թե՛ դրանց ներկայացումը հանձնաժողովում և լիագումար նիստերում, բնորոշում է խմբակցության ակտիվ գործունեությունը:

Որպես որդեգրված քաղաքականություն հնրավորինս փորձում ենք կարգավորելի դարձնել մեր փոխհարաբերությունները բոլոր քաղաքական ուժերի հետ:

Խմբակցությունը իր աշխատանքների հիմքում արտացոլում է ՀՀԿ խորհրդի, խորհրդի նախագահի և, ընդհանուր առմամբ, կուսակցության սկզբունքներն ու գաղղափարախոսությունը: Մեծ տեղ տալով մեր պատմության կայունության ամրապնդմանը՝ խմբակցությունը, բնականաբար, սատարում է ՀՀ կառավարության

գործունեությանը, քաջ գիտակցելով կառավարության առանձնակի դրսևորումները մեր որկրի տնտեսական և քաղաքական կյանքում՞ Առավել ևս արդեն իսկ ակնհայտ է վերջին մի քանի տարիներին հանրապետականների անխժռելի կեցվածքը, ընդգծված արդյունքները Հայաստանի Հանրապետության պետականաշինարարության գործում:

ՀՀԿ պատգամավորների ակտիվությունը ընդգծվում է թե՛ Ազգային Ժողովում և թե՛ հասարակության, ընտրողների շրջանում կատարվող աշխատանքներում:

Եթե բուն օրենսդրությամբ զբզղվող պատգամավորները իրենց ակտիվության դրսևորումները առանցքային են դարձրել ընդհանուր խորհրդարանական գործառույթներում, ապա պատգամավորների զգալի մասը, հիմնականում մեծամասնական ընտրակարգով ընտրված, ամենօրյա կապերի մեջ են ընտրողների հետ. կիսում են նրանց հոգսերը, ավելին, նպաստում են տարածքների փոքր և մեծ խնդիրների լուծմանը:

Աներկբա է մեր պատգամավորների արդյունավետ աշխատանքը նաև միջազգային խորհրդարանական կառույցներում, բարեկամական խմբերում:

ՀՀկ մեծ թվով պատգամավորներ ղեկավարում են միջխորհրդարանական պաշտոնական պատվիրակությունների և բարեկամական խմբերի գործունեությունը:

Խմբակցության գործառույթները արտացոլող աշխատանքները շատ են և բազմաբովանդակ: Բնական է , մեկ ելույթով ամեն ինչ չէ, որ հնարավոր է վերլուծել: Սակայն առանձնակի խոսք պետք է ասվի Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի մեր պատվիրակության աշխատնքների մասին, որը ղեկավարում է կուսակցության փոխնախագահ Տիգրան Թորոսյանը:

2001թ. հունվարի 25-ին Հայաստանը դարձել է Եվրոպայի խորհրդի լիիրավ անդամ, որդեգրելով մեր երկրի համար շատ կարևորագույն հիմնահարցերի պարտավորություն: Ինչ խոսք, աշխատանքները բավականին տարողունակ էին, երբեմն դժվարին:

Սակայն և ավելորդ վարագրումներից խուսափելով՝ ասեմ, դրանց իրականացման ճանապարհին մեծ դեր ունի խմբակցությունը, հանձինս Տիգրան Թորոսյանի:

Առանձնակի արդյունք ձևակերպեց խմբակցությունը, հանձինս Գագիկ Մինասյանի, այս տարի հոկեմբերին Սևծովյան տնտեսական համագործակցության տնտեսական հանձնաժողովում: Քննարկման էր դրվել Կարս-Ախալքալակ երկաթուղու շինարարության հարցը: Մեծ ջանքեր պահանջվեց, որպեսզի նախագիծը հանձնաժողովի որոշմամբ արձանագրի՝ Կարս-Գյումրի-Թբիլիսի-Բաքու երկաթուղու շինարարության խնդիրը:

Այսօր Սևծովյան համագործակցության 12 երկրները ուզեն, թե չուզեն, ընդ որում նաև Եվրոմիության համապատասխան կառույցները կքննարկեն վերոհիշյալ տարբերակը: Ակնհայտ է՝ դրական լուծումների դեպքում, տնտեսական առումով, ինչպիսի մեծ ձեռքբերում կունենա Հայաստանը:

Ձեռքբերումների թվարկումներ շատ կարող են լինել: Իսկ դրանց մեջ կարևորում է, որ խմբակցության յուրաքանչյուր պատգամավոր իր ընդգծված ներդրումն ունի մեր քաղաքական կյանքում, առավել ևս՝ մեր պետության համար կարևորագույն խնդիրներում, անկասկած միասնական են և պատրաստ են ցանկացած խնդիր, որը նպաստում է մեր կուսակցության մարտավարության ամրապնդմանը, երկրի կայունացմանը, պետության հզորացմանը աննահանջ զորավիգ լինելու:

Առաջիկա տարիներին կուսակցությանը մեծ փորձություններ են սպասվում՝ կապված համապետական ընտրությունների հետ: Առավել ևս գնալով ընդհանրական է դառնալու գորշ պոպուլիզմը խորհրդարանում, որն ավելի վտանգավոր է պետության համար, քան ցանկացած գործառույթ:

Մարդիկ, որոնք տարիներ շարունակ թե՛ քաղաքական գործընթացներում և թե՛ երկրի կարևորագույն իրադարձությունների նկատմամբ սպառողական վերաբերմունք են դրսևորել, այսօր փորձում են օգտվելով ժողովրդի սոցիալ-տնտեսական վիճակից, իրենց կեղծ դիրքորոշումներով որոշակի ներգործել ժողովրդի հոգեբանության վրա, երբեք հաշվի չառնելով պետության սոցիալ-տնտեսական առաջընթաց ապահովող ռազմավարությունը:

Մեղմ ասած, սուտլիկ-որսկանությունը մտել է քաղաքական դաշտ: Իմ կողմից բարի որակավորում, այլոց համար՝ չար դրսևորում:

Քաղաքականությամբ զբաղվող անհատներ են առաջացել և ծիծաղաշարժ լարախաղացի նման փորձելու են՝ սեփական սրբերին մոռանալով, ոտնահարելով ամեն ինչ: Այս ամենը ոչ միայն հոգս է, այլև կողծությունների կծիկ, որը, կարծում եմ, արմատախիլ կարվի հենց մեր կողմից:

Եվ ինչո՞ւ հենց մեր...ասեմ, վերջին տարիների մեր երկրի սոցիալ-տնտեսական ձեռքբերումների գլխավոր մեկնարկակետը Հայաստանի Հանրապետական կուսակցությունն է և այն կուսակցությունների մեծ մասը, որոնք համագործակցել են:

Երբեմն մենք էլ մեղադրվում ենք պասիվության մեջ, որակավորումը՝ չենք զբաղվում պոպուլիզմով, բեռ տանողը արդեն իսկ իր առաքելությունը կատարում է:

Կարծում եմ, որ առաջիկայում ՀՀԿ պատգամավորական խմբակցության առջև լուրջ խնդիրներ են դրվելու: Առավել ևս՝ թե՛ խորհրդարանում, թե՛ արտախորհրդարանական պատգամավորական գործառույթներում մենք պարտավոր

ենք մեր վերլուծականներով հանրությանը ներկայացնել մեր երկրի իրական գործընթացները, դրանով իսկ բացահայտենք ճղճիմ վերագրումները այս կամ այն մարդու կողմից և համար, ցույց տալ մեր մարտավարությունը վերջին տարիներին և ձեռքբերումների հիմնական հեղինակներին:

Մենք կարծում ենք, որ ՀՀԿ-ն ԱԺ-ում ներկայացնող համանուն խմբակցությունը առաջիկայում ևս ի զօրու է մինչև վերջ լուծելու կուսակցության կողմից առաջադրված ցանկացած խնդիր: Մենք վճռական ենք և ամեն ինչ անելու ենք, որ այն ձեռքբերումները, իսկ դրանց մասին կան հրապարակումներ, վերլուծություններ, որ ունեցել ենք վերջին տարիներին իրենց բնականոն շարունակությունն ունենան:

Ժամանակները ցույց տվեցին, որ Հանրապետականը պարզապես իրավունք չունի պատմականորեն տրված իր դերակատարումը մինչև վերջ չհասցնելու: Ճանապարհը մեր ժաղավրդինն է:

ՀՀԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ՀՀԿ 9-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Համագումարի հարգելի պատվիրակներ,

Թույլ տվեք ողջունել համագումարի բոլոր մասնակիցներին: Իմ ելույթում հիմնականում ցանկանում են անդրադառնալ վերջին 2 տարվա ընթացքում կուսակցության կողմից իրականացված հիմնական աշխատանքներին, ձեզ ներկայացնել ունեցած ձեռքբերումները, ինչպես նաև ընթացիկ աշխատանքները, որոնք խնդիր ունեն էլ ավելի ամրապնդել կուսակցության տեղն ու դերը հայ հասարակական-քաղաքական իրականության մեջ: Ելնելով 8-րդ համագումարում որդեգրված սկզբունքներից և խնդիրներից՝ հաշվետու ժամանակաշրջանում կուսակցության խորհուրդը կազմակերպչական հանձնաժողովի առջև դրել է կուսակցության տարածքային կազմակերպությունների և կառուցվածքային ստորաբաժանումների միջև արյդունավետ համագործակցության, խնդիրների համատեղ լուծման, ինչպես նաև կուսակցական կարգապահության, կուսակցական կադրերի հետ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացման և տարածքներում հասարակական-քաղաքական տարբեր միջոցառումներին ակտիվորեն ներգրավելու ու կազմակերպելու հստակ պահանջներ: Այս առումով ներկայացնեմ մի շարք կարևորագույն ձեռքբերումներ, որոնք կուսկացության խորհրդի, մարզային և տարածքային կազմակերպությունների պարբերական և նպատակաուղղված աշխատանքի արդյունք են: Խնդիրներից առաջինը, որին ձեռնամուխ եղան կուսակցության կառույցները, դա կուսակցության կադրերի վերագրանցման և տվյալների բազայի ընդլայնման խնդիրն էր, որի արդյունքում մեր

կուսակցականների կողմից վերահաստատվեց կուսակցությանն անդամակցելու ցանկությունը, ինչի արդյունքում այսօր մենք ունենք ավելի քան 25,000 կուսակցական ընկերներ: Այդ գործընթացի ընթացքում ճշտվեցին կուսակցության անդամների սոցիալական կարգավիճակը, մասնագիտական կողմնորոշումը, զբաղվածության մակարդակը, նրանց հասարակական քաղաքական ակտիվության դրսևորման հնարավորությունները: Դա թույլ տվեց կուսակցութան շարքերում գնալ ինքնամաքրման: Կատարվեցին կուսակցության շարքերի որոշակի հիմնավորված զտումներ: Այս աշխատանքները կրելու են շարունակական բնույթ, և հետագայում ևս լուրջ ուշադրություն է դարձվելու այս խնդիրներին: Այդ արյունքների հիման վրա համապատասխան ընտրության միջոցով 1394 կուսակցականներ մասնակցեցին կադրերի վերապատրաստման եռօրյա դասընթացների շարունակական ծրագրերին: Դասընթացների մասնակիցները ակտիվորեն ներգրավված են տարածքային կազմակերպություններում ձևավորված գաղափարաքարոզչական, կազմակերպ-չական, կանանց և երիտասարդական հանձնախմբերի աշխատանքներին: Կարող եմ փաստել, որ 2 տարվա ընթացքում անց է կացվել 5 կենտրոնական և 10-ից ավել լոկալ ծրագրեր: Իրականացված ծրագրերը ծառայել են իրենց նպատակներին, նպաստել են միջանձնային կապերի ձևավորմանը, տարածքային և մարզային կառույցների փոխհամագործակցությանը, և որ ամենից կարևորն է, այդ ծրագրերի միջոցով բացահայտվել են շատ շնորհալի և իրենց գործի գիտակ, գաղափարապես կայացած կուսակցական ընկերներ՝ հիմնականում երիտասարդներ, որոնց ներուժը ապագայում ևս լուրջ երաշխիք է կուսակցության ամրապնդման և հզորացման գործում:

Այս ընթացքում կուսակցության համապատասխան կառույցների կողմից հանրապետության մարզերում և Երևան քաղաքում կազմակերպվել են ավանդական ազգային, կուսակցական, գիտական, սպորտային, մշակութային ամենատարբեր միջոցառումներ, որոնց միայն հաջորդական թվարկումը բավականին երկար ժամանակ կպահանջի: Ընդամենը նշեմ, որ արդեն ավանդական են դարձել ՀՀԿ շրջանակներում մի շարք մարզաձևերի գծով համահանրապետական առաջնությունների անցկացումը, Լեռնահայաստանին և Գարեգին Նժդեհին նվիրված միջոցառումների շարքը, ինչպես նաև սոցիալական ուղղվածության միջոցառումները՝ այցելություններ ծերանոցներ, մանկատներ, զորամասեր, հատուկ նշանակության դպրոցներ և այլն:

Կուսակցությունն իր ամենօրյա աշխատանքում ձգտում է ամրապնդել կապը հասարակության ամենալայն շերտերի հետ: Տարածքային կազմակերպությունները, ելնելով հանրային պահանջմունքներից, փորձում են նպաստել սոցիալ-մշակութային

խնդիրների լուծմանը: Նախորդ 2 տարվա ընթացքում կուսակցության խորհրդի նախագահ պրն. Ա. Մարգարյանի, կուսակցութան խորհրդի անդամների, ԱԺ «Հանրապետական» խմբակցության պատգամավորների, կուսակցական կառույցների ղեկավարների կողմից եղել են բազմաթիվ այցելություններ, հանդիպումներ և գործնական քննարկումներ հանրապետության բոլոր մարզերի, կուսակցության ակտիվի և ազգաբնակչության հետ:

Այս ընթացքում տարածքային կազմակերպությունների մեծ մասում ստեղծվել են 107 նոր սկզբնական կազմակերպություններ, իսկ կուսացկության շարքերին անդամագրվել են 3615 մարդ՝ հիմնականում երիտասարդներ: Լոռու մարզում ստեղծվել է նոր տարածքային կազմակերպություն՝ Մոտկոր, որն իր մեջ ներառում է Թումանյան քաղաքի և շրջակա 12 գյուղերում ձևավորված սկզբնական կազմակերպությունները: Կարծում եմ պետք է փաստել, որ հետագա մեր աշխատանքներում պետք է կարևորել և ակտիվացնել սկզբնական կազմակերպությունների աշխատանքները, քանի որ վերջիններս անմիջականորեն հանդիսանում են հասարակության հետ ակտիվ կապերը պահպանող և գաղափարաքարոզչական աշխատանքներ իրականացնող մարզային կարևորագույն կուսակցական օղակներ: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ մարզային և տարածքային կազմակերպությունների մակարդակում առկա հիմնական խնդիրները ստացել են լուծումներ կամ գնտվում են լուծման ընթացքում, ապա սկզբնական կազմակերպությունների դեպքում դեռևս ունենք լուծման ենթակա խնդիրներ:

Երկու տարվա ընթացքում կուսկացության խորհրդի հանձնարարությամբ Հանրապետական կուսկացությունը սեփականության իրավունքով՝ կուսակցության անդամների նվիրատվության և անդամավճարներից գոյացած միջոցներ հաշվին ձեռք են բերվել, վերանորոգվել և կահավորվել 20-ից ավելի տարածքային կազմակերպության գրասենյակներ հանրապետության տարբեր մարզերում: Դրա հետևանքով էլ ավելի արդյունավետ է դարձել տարածքային կազմակերպություններում կուսակցության բնականոն աշխատանքների կազմակերպումը: Ներկայումս աշխատանքներ են տարվում Նոյեմբերյանում, Թալինում, Էջմիածնում, Արտաշատում, Վեդիում, Մարտունիում, Գյումրիում և այլ քաղաքներում կուսկացության տարածքային կազմակերպությունների գրասենյակների ձեռք բերման ուղղությամբ:

Կուսակցության տարբեր կառույցներն ակտիվ համագործակցում են հասարակական մի շարք կազմակերպությունների հետ, որոնց կողմից բարձրացված խնդիրները հնարավորության շրջանակներում արժանացել են համապատասխան ուշադրության:

Հարգելի պատվիրակներ, ուզում են ձեր ուշադրությունը հրավիրել 2004-2005թթ. ընթացքում տեղի ունեցած ՏԻՄ ընտրություններին:

Կարևորելով տեղական ինքնակառավարման մարմինների դերն ու նշանակությունը հանրապետության համայնքային զարգացման և բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը նպաստելու գործում՝ կուսակցության կառույցներն ակտիվորեն մասնակցել են տեղի ունեցած ՏԻՄ ընտրություններին, առաջադրել կուսակցական թեկանծուներ, կամ պաշտպանել այն անկուսակցականներին, որոնք վայելել են համայնքի բնակչության վստահությունը: Թեկնածուների ընտրության հետ կապված աշխատանքները մեզ մոտ սկսվել են ընտրություններից շատ առաջ, և մշտապես գտնվել են կուսակցության խորհրդի և կուսակցության համապատասխան կառույցների ուշադրության կենտրոնում: Թույլ տվեք մի քանի ցուցանիշներով ներկայացնել ՏԻՄ ընտրությունների ընդհանրացված արդյունքներն ըստ մարզերի:

		նախկինում			*ընտրություններից հետո*	
Երևան	12	4	**33%**		5	**42%**
Կոտայք	67	18	**27%**		28	**42%**
Շիրակ	119	28	**24%**		28	**24%**
Արագածոտն	114	43	**38%**		51	**45%**
Արմավիր	97	27	**28%**		37	**38%**
Արարատ	97	26	**27%**		38	**39%**
Գեղարքունիք	92	52	**57%**		50	**54%**
Լոռի	113	51	**45%**		65	**58%**

Սյունիք	109	28	**26%**		61	**56%**
Տավուշ	62	49	**79%**		50	**81%**
Վայոց Ձոր	44	28	**64%**		28	**64%**
Ընդ. մարզեր	914	350	**38%**		436	**48%**
Ընդ. ՀՀ	926	354	**38%**		441	**48%**

Այսպիսով կուսկացության սկզբնական, տարածքային և մարզային կազմակերպությունների նպատակային, և կուսակցության խորհրդի հետևողական աշխատանի արդյուքնում մենք կարող ենք արձանագրել, որ

1. ՀՀԿ-ն շարունակում է հանրապետության շատ բնակավայրերում ունենալ հասարակության մեծամասնության աջակցությունը. բնակչությունը վստահում է մեր կողմից առաջադրված և պաշտպանված թեկնածուներին ու նրանց ծրագրերին,
2. ՏԻՄ-ի ընտրությունների արդյունքները մեզ լուրջ հիմքեր են տալիս 2007թ. ԱԺ ընտրություններում կուսացկության կողմից դրվող խնդիրները լուծելու համար՝ պահպանելով և ամրապնդելով կուսակցության ակտիվ դերը ՀՀ քաղաքական համակարգում
3. Սա միաժամանակ նաև պարտավորություն է հանրապետության բնակչության առջև ՏԻՄ-երի զարգացման և կայացման խնդրում:

Կուսակցության կառույցները պետք է աջակցեն ընտրված կուսակցական և ոչ-կուսակցական համայնքապետերին, որպեսզի վերջիններիս պատվով կատարեն իրենց առջև դրված խնդիրները: Այդ աշխատանքները կուսակցության կառույցների կողմից պետք է կրեն մշտական բնույթ՝ նպատակ ունենալով պահպանել և ամրապնդել ձեռք բերվածը, ինչպես նաև կատարվող աշխատանքներով արդարացնել բնակչության վստահությունը:

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՓՈԽՄԱՐԶՊԵՏ Ս. ՍԱՀԱԿՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ 9-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ



Մեծարգո նախագահող,

Հարգելի հանրապետականներ, ողջունում եմ Ձեզ ՀՀԿ-ն 9-րդ համագումարի կապակցությամբ:

Ուրախ եմ, որ այսօր ՀՀԿ-ը իր մեծ դերակատարումն ունի մեր պետականության կայացման, կայունացման և տնտեսության զարգացման գործում:

Շատ լավ հիշում ենք, որ ոչ վաղ անցյալում, երբ հանրապետության կառավարման ղեկը ստանձնեց ՀՀԿ-ն նախագահ պ-ոն Անդրանիկ Մարգարյանը, ինչպիսի բարդ ու դժվարին ժամանակներ էին Հայաստանում: Կրթական, առողջապահական, սոցիալական ոլորտներում ամիսներով և նույնիսկ տարիներով չվճարված աշխատավարձերի և թոշակների պարտքեր, քաղաքական արենայում անհասկանալի ու անբացատրելի լարվածություն, կուտակված հսկայական պրոբլեմային հարցեր, բայց այսօր իրականությունը այլ է:

Ուրախ եմ և հպարտ, որ շատ կարճ ժամանակում, պ-ոն Մարգարյանը իր շուրջը կարողացավ համախմբել այնպիսի առողջ ու կարեղ ուժեր, որոնց կոլեկտիվ ջանքերի շնորհիվ ոչ թե վճարվեցին այդ չնչին աշխատավարձն ու թոշակը, այլ մի քանի անգամ ավելացնելով և ժամանակին վճարելով, զգալի թեթևացրին սոցիալական լարվացությունը և ապահովեցի տնտեսության զգալի առագընթաց: Պարզ է ու հասկանալի, որ այսօր էլ կան դժվարություններ և խնդիրներ,որ շարքային քաղաքացին դեռ ապահովված չէ այսօրվա աշխատավարձով կամ աշխատանքով և չի կարող լիարժեք ապրել ու հոգալ իր ընտանիքի խնդիրները:

Բայց այն առաջընթացը, որ այս կարճ ժամանակահատվածում իրականացավ, այսօր փաստ է ու իրականություն:

Ուզում եմ խոսել փաստերով...

Մեր մարզի՝ Արագածոտնի մարզի կտրվածքով:

1990-2000թթ. մեր մարզի ոչ մի համայնքում դպրոց չի կառուցվել, մեկ-երկու ջրագիծ է ընամենը վերանորոգվել, իսկ ճանապարհաշինության մասին ընդհանրապես խոսք չի եղել: Իսկ վերջին 4-5 տարիների ընթացքում մարզում կառուցվել են 18 դպրոցներ, հիմնովին վերանորոգվել են 55-ը, մասնակի վերանորոգվել են 28 դպրոցներ:

Մարզում ամբողջովին ավարտվել է հանրապետական նշանակության ճանապարհների կառուցումը, իսկ միջհամանքային ճանապարհների 65%-ը վերանորոգումից հետո բարեկարգ վիճակում է գտնվում: Շուրջ 35%-ով վերակառուցվել կամ վերանորոգվել են ոռոգման և խմելու խողովակաշարերը:

Կարկտահարությունից կամ ցրտահարությունից տուժած համայնքներին օպերատիվ կարգով արձագանքվել է կառավարության կողմից և հնարավորության սահմաններում, վնասները մեղմելու նպատակով գյուղացիական տնտեսություններին ամբողջովին ձրի, անհատույց տրամադրվել են թունաքիմիկատներ, պարարտանյութ, սերմացուներ, տնկանյութ:

Եթե այս տեմպերով ընթնա աշխատանքները համոզված եմ, որ ևս 2-3 տարի մեր մարզում դպրոցները ամբողջովին բարեկարգ վիճակում կլինեն, միջհամանքայն ճանապարհները ամբողջովին կվերականգնվեն և կլինի երթևեկելի: Ոռոգման և խմելու ջրի կորուստները կհասցվի մինիմումի և այդպես շարունակ:

Ես լավատես եմ և համոզված եմ, որ այդ աշխատանքները կշարունակվեն և կընդգրկեն այլ բնագավառներ:

Ուզում եմ խոսել հատկապես մարզում ՀՀԿ-ն կատարած աշխատանքների մասին:

Անցած համագումարի ժամանակ Արագածոտնի մարզում կար 31 ՀՀԿ անդամ համայնքի ղեկավարներ: Բայց ս(թ հոկտեմբերի 23-ին տեղի ունեցած տեղական ինքնքկառավարման ընտրությունների ժամանակ ունեցել ենք ՀՀԿ անդամ 43 համայնքի ղեկավարներ, պարտվել ենք 4-ը համայնքներում այն էլ ձայների չնչին տարբերությամբ: Մեր պաշտպանած համայնքի ղեկավարի թեկնածուներից գործող գյուղապետերին հաղթել են 5-ը և ևս 7-ը համայնքի ղեկավարների ընտրություններից հետո համալրեն են ՀՀԿ շարքերը: Վերջնական արդյունքում 114 համայնքներից 51-ը ՀՀԿ-ի անդամներ են, շուրջ 20-ը՝ համակիրներ:

Բավական լարված պայքար էր ընդանում մարզում տեղական ինքնքկառավարման մարմինների ընտրությունների ժամանակ, և փառք ու պատիվ մեր մարզային ու տարածքային կազմակերպություններին և տեղի հանրապետականներին, որ կարողացան ողջ ուժերը կենտրոնացնել և նշանակալի հաղթանակ տանել:

Ավելորդ չեմ համարում նշել, որ մեր մարզում մնացած բոլոր կուսակցությունները և քաղաքական ուժերը միասին վերցրած կարողացան անցկացնել ընդամենը 26 համայնքի ղեկավարների: Սա նաև խոսում է Հայաստանի Հանրապետությունում ՀՀԿ-ի մեծ հեղինակության մասին:

Նաև ուզում եմ շեշտել, որ մեր 51 համայնքի ղեկավարները բավականին կիրթ և հզոր գյուղապետեր են և իրավամբ վայելում են իրենց համայնքի բնակիչների վստահության քվեն, դրա վառ ապացույցն է նաև այն փաստը, որ մի շարք համայնքներում մեր հանրապետական համայնքապետերի դեմ այլ թեկնածուներ չառաջադրվեցին՝ չնայած որոշ քաղաքական ուժերի քրտնաջան աշխատանքի: Օգտվելով առիթից ես ուզում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել մեր այն հանրապետականներին, որոնք աջակցեցին մեզ տեղական ինքնքկառավարման մարմինների ընտրությունների ժամանակ:

Ուզում եմ խոսել նաև մի ցավոտ հարցի մասին՝ կադրային քաղաքականության մասին: Մեր մարզում միակ պաշտոնյա կուսակցականը ես եմ և աշխատում եմ որպես փոխմարզպետ, այլ հանրապետական պաշտոնյաներ չկան, բայց ձեզ հավատացնում եմ, որ մեր մարզի կուսակցականների մեջ կան բավականին կիրթ և մասնագիտական հմտություններով օժտված մարդիկ, որոնք աշխատանք չունեն: Ես համոզված եմ, որ վերջիններից շատերը տարբեր ոլորտներում ավելի արդյունավետ կարող են աշխատել, քան այսօրվա մեր մարզի շատ պաշտոնյաներ: Խնդրում եմ ուշադրություն դարձնել այս հարցին, քանզի շատ քիչ ժամանակ է մնացել գալիք ԱԺ ընտրություններին, և եթե չկարողանանք մի քանի կադրային հարցեր լուծել, կարծում եմ սպասելիքները գոհացնող չեն լինի:

Կարծում եմ, որ պետք է ակտիվացնել, հատկապես, կապը ԱԺ-ի հանրապետական պատգամավորների և մարզի մեր ակտիվի միջև, կազմակերպել հաճախակի այցելություններ մարզի համայնքներում, հանդիպումներ տարածքային կազմակերպությունների անդամների և ժողովրդի հետ: Ես կարծում եմ, որ այդ բացը նրանից է, որ մարզը չունի հանրապետական պատգամավոր, և ուզում եմ հավատալ, որ գալիք ընտրություններին դա կշտկվի:

Մի խնդրանք էլ ունեմ ՀՀԿ-ն նախարարներին, տարբեր ճիգերով ծրագրեր են իրագործվում, հնարավորության սահմաններում, ամրապնդեք կապը մեզ հետ աշխատանքները համատեղ կազմակերպելու համար:

ՀՀԿ-ն կանոնադրական փոփոխությունները քննարկվել են Մարզային և տարածքային խորհուրդներում, քննարկումների ժամանակ առաջարկներ են եղել, որն էլ ներկայացրել ենք ՀՀԿ գրասենյակ և, կարծում եմ, որոշ առաջարկներ կհաստատվեն: Կանոնադրական փոփոխությունների տարբերակը, կարծում եմ, ճիշտ ժամանակին էր և մեզ մոտ կայացած քննարկումների ժամանակ հավանության է արժանացել: Իմ անունից և մարզի հանրապետական կուսակցականների անունից կոչ ենք անում, որպեսզի այն ընդունվի:

ՇՆՈՐՀԱԿԼՈՒԹՅՈՒՆ

ՀՀԿ ԱՐՄԱՎԻՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՓԱՌԱՆՁԵՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ 9-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Համագումարի հարգելի պատվիրակներ՝

Եթե կուսակցության ութերորդ համագումարում խնդիր դրվեց ուժեղացնելու կուսակցության տարածքային կազմակերպությունները , ապա այս համագումարում, մեր կարծիքով, պիտի դրվի սկզբնական կուսակցական կազմակերպությունների հզորացման խնդիրը, որովհետև ներքին օղակում ոչ այնքան կարևոր է թե ով է ղեկավարում կուսակցությունը, այլ այն, թե իրենց մոտ ով է կուսակցության առաջնորդը, նրա գաղափարները կրողը, ծրագրերը իրականացնողը կամ հակառակը՝ ձախողողը: Քանզի կուսակցությունը միայն գաղափարախոսություն չէ, ազգի քաղաքական կյանքի հեռանկար կերտող չէ, այլ իրական միս ու արյու ունեցող, հեղինակություն վայելող կամ հակառակը՝ կուսակցությանը հեղինակազրկող մարդիկ: Եվ ներկայիս հանրապետական վարչապետի, հանրապետական նախարարների լավագույն նախաձեռնություններն ու իրակնացրած ազգանվեր ծրագրերը, երբեմն մի չկայցած հանրապետական համայնքի ղեկավարի կողմից ջուրն են լցվում այդ համայնքում իր ապաշնորհուության կամ էլ ոչ պակաս կարևոր ՝ մարդկային բարոյական ոչ պատշաճ կերպարի պատճառով:

Այս առումով մենք մարզում անչափ կարևորել ենք կուսակցության շարքերի համալրումը մտավորականության, կրթության, մշակույթի, առողջապահության բնագավառների ներկայացուցիչներով, և հատկապես՝ երիտասարդներով: Մարզային կազմակերպության նախագահ Նահապետ Գևորգյանի ընտրությունից հետո ՀՀԿ համալրվել է այնպիսի մարդկանցով, որոնցից յուրաքանչյուրի մուտքը միայն պատիվ է բերում կուսակցությանը, որոնք, ինչպես իրավացիորեն նշեց նախորդ համագումարում կուսակցության խորհրդի նախագահ պարոն Մարգարյանը, գալիս են ոչ թե կուսակցությունից ստանալու ինչ-որ բան՝ պաշտոն, պաշտպանվածություն կամ ապագային միտված հնարավորություններ, այլ գալիս են տալու կուսակցությանն ու ժողովրդին նախ իրենց լավագույն աշխատանքը, իրենց հնարավորությունները, և, ամենակարևորը, կիսում են այն գաղափարական սկզբունքները, որ դրված են հանրապետականի ծրագրերի հիմքում: Այդ մարդկանցից յուրաքանչյուրը կայացած է իր ոլորտում: Հանրապետականը պետք է գիտենա, որ եթե ինքը պրոֆեսիոնալ, գիտակ ու բարեխիղճ չէ իր հիմնական աշխանանքում, եթե նա օրինակ չէ այլոց համար իր հանրության մեջ ունեցած մարդկային կերպարով, ապա նա երբևէ լավ կուսակցական առաջնորդ լինել չի կարող, առավել ևս նա որևէ մեկի գաղափարական դաստիարակությամբ զբաղվելու

իրավունք չի կարող ունենալ: Մեր համեստ դիտարկմամբ հանրապետականի համար պիտի կարգախոս լինի ոչ թե «եթե մերն է, ուրեմն լավն է, այլ եթե լավն է, ուրեմն մերն է կամ պետք է դառնա մերը » սկզբունքը: Հանրապետականը, որպես կայացած կուսակցություն, կարիք չունի քանակի, այլ՝ այնպիսի որակի, որի համար խիստ կարևոր է ազգային գաղափարախոսական աշխարհայացքը, որը երկրի ապագան կերտելու նպատակով մտքով ու հոգով չի դեգերում եվրոպաներում՝ գտնելու և սեփականացնելու համամարդկային և մարդկային նոր, բայց մեզ համար օտար արժեքներ, այլ տեսնում ու գնահատում է սերնդի դաստիարակության համար մեր պատմության մեջ մինչև հիմա չգերազանցված իդեալը՝ նժդեհյան ցեղակրոն ուսմունքն՝ իր լայնախոհությամբ և հայրենապաշտությամբ:

Այսօր մեր կուսակցության համար և ոչ միայն նրա համար, ավելի կարևոր պիտի լինի ոչ թե այն, թե քանի հանրապետական դպրոցի տնօրեն ունենք, այլ այն, թե նույն դպրոցում նժդեհյան գաղափարներից քանիսն են դրվել մատաղ սերնդի դաստիարակության հիմքում: Եվ ունե՞նք արդյոք մեր իրականության մեջ պատշաճ քանակ այդ գաղափարների իսկական կրողների, որոնց պատրաստման գործում մարզում մենք խիստ կարևորում ենք հանրապետականի երիտասարդական կազմակերպության դերը, որն ըստ էության պիտի պատրաստի նժդեհյան գաղափարակիրներ ու առաջնորդներ: Աշխատանքի բերումով ես այսօր կարող եմ վստահաբար հայտարարել. այո, մեր ժողովուրդը կարիք ունի նորմալ ասված խոսքի, գաղափարական դաստիարակության, որովհետև բոլոր այն մարմինները, որոնք կոչված պիտի լտնեին այդ խնդիրներն իրականացնելուն / մամուլ, հեռուստատեսություն, մասամբ նաև դպրոցը /, ավելի շատ զբաղված են գործունեությամբ կամ որ ավելի վատ է՝ ապազգային գաղափարներ ներմուծելով և դրանց տարածմանը ակտիվորեն ծառայելով: Եվ սրա դեմ պայքարը առաջին հերթին մեր՝ հանրապետականներիս, խնդիրն է, որի դավանած գաղափարներն իրենց ակունքներով ամենաազգանպաստն են ու երկրաշենը: Վերադառնալով մեծն Նժդեհին, հիշենք խոսքը նրա հանճարեղ՝ «Յուրաքանչյու ժողովուրդ ինքն է իր ճակատագրի դարբինը և յարաքանչյու ժողովուրդ ի վերջո վաղը կապրի այնպես, ինչպես ուզում է ապրել այսօր: Ուրեմն փառք այն ուժին, անհատին, կուսակցությանը, որ կոգնի ժողովրդին վերաշինելու ու կերտելու իր ապագան»*:* Ուրեմն չհիծենք ժողովրդին, երբ նա է մեզ պետք, այլ հիշենք, որ մենք ենք նրան միշտ պետք: Ուրեմն լինենք այն ուժը, որ կարող է և պոտք է ժողովրդին հասցնի իրեն արժանի լուսավոր օրվան: Հանրապետականը դա կարող է: Ուրեմն մնանք մեր պատմական սրբազան առաքելությանը հավատարիմ ու աշխատենք բոլոր նրանց հետ, ովքեր կուխտեն

նույնպես ազգին ծառայել, աշխատենք յուրաքանչյուրս մեր տեղում, մեր ուժերի գերլարեւմով և ապագան իսկական մերը կլինի:

Վերջում մեկ առաջարկություն կուսակցության կանոնադրության փոփոխության հետ կապված. մեզ ներկայացված նախագծում ընդունված է այն սկզբունքը, որ բոլոր սկզբնական կազմակերպությունների նախագահներն ի պաշտոնե դառնում են կուսակցության տարածքային խորհրդի անդամներ: Դա, ինչ խոսք, էլ ավելի բարձրացնում է սկզբնական կազմակերպությունների դերը, սակայն իրականության մեջ տարածքային խորհուրդները, որպես աշխատող մարմիններ, իրենց մեծաքանակության պատճառով դառնում են դժվար կառավարելի և պակաս գործուն: Այս դժվարությունը կարելի կլինի վերացնել, ունենալով նաև տարածքային խորհրդի ընթացիկ գործունեությունը, իսկ խորհրդի նախագահը միաժամանակ կլինի վարչության նախագահ և նախկինի նման հաշվետու կլինի խորհրդին:

ՀՀԿ «ԿԵՆՏՐՈՆ» ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Դ. ԴՈՒՄԱՆՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ 9-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետական Կուսակցության խորհրդի մեծարգո նախագահ, համագումարի հարգարժան պատվիրակներ, հյուրեր:

Երևանի «Կենտրոն» տարածքային կազմակերպության անունից ողջունում եմ Ձեզ՝ ՀՀԿ հերթական համագումարի առթիվ:

ՀարգելիՀանրապետականներ, կարծում եմ պրիգինալ չեմ լինի, եթե նշեմ, որ ՀՀԿ-ն կայացած, հստակ նպատակ և գաղափարախոսական ունեցող ազդեցիկ քաղաքական ուժ է: Այս դահլիճում հավաքվածներից յուրաքանչյուրը ընդունակ է և՝ քաղաքական, և՝ պետական ազգանպաստ աշխատանք կատարելու: Մենք մեր կոալիցիոն գործընկերների հետ իշխանության կրող ենք, երկրի ներկայի և ապագայի նկատմամբ պատասխանատվությունը վերցրած անդամներ: Ասել է թե, քաղաքական դաշտում բախտորոշ վճիռներ կայացնելիս մեր ձայնը, մեր դիրքորոշումը կարևորում է: Կարծում եմ, կհամաձայնեք ինձ հետ, որ իշխանության կրող լինելը - դա ավելի շատ պարտավորություն է և պատասխանատվություն, քան՝ իրավունք և արտոնություն: Այս պարագայում ես շատ եմ կարևորում պարտավորությունների կազմակերպված, նպատակաուղղված իրականացումը:

Մենք Ձեզ հետ միասին լսեցինք կուսակցության խորհրդի նախագահի զեկուցումը և միանշանակ կարող ենք արձանագրել, որ հաշվետու ժամանակաշրջանում իրոք հսկայական աշխատանք է կատավրել: Իսկ բերված փաստերը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում կուսակցության հաջողությունների մասին իսկապես տպավորիչ են և վկայում են այն մասին, որ կուսակցությունը մեր երկրում բավականին ժողովրդականություն է վայելում և շատ կուսակցությունների նման մայրաքաղաքային չէ: Առաջարկում եմ կատարված աշխատանքները գնահատել բավարար: Սակայն, ինչպես ասում են, լավը մերն է, և այն ոչ ոք մեզնից չի վերցնի, ուստի ցանկանում եմ Ձեր ուշադրությունը հրավիրել մի քանի, մեր կարծիքով, կարևոր հարցերի վրա:

1. Կադրերի պատրաստման, առաջխաղացման գործընթացում պետք է մեծ տեղ հատկացնել տարածքային կազմակերպություններին՝ նրանց վերապահելով երաշխավորի և, ինչու չէ, նաև պատասխանատուի դերը: Իմ կարծիքով քաղաքական, գաղափարական հենք ունեցող կադրային ռազմավարությունը պետք է կուսակցական կարևոր խնդիր լինի և բխի կուսակցության գաղափարակիր անդամներին գործունեության ոլորտ ապահովելու նպատակից: Մենք պարտավոր ենք կադրային լուրջ վերլուծական աշխատանքի շնորհիվ ստեղծել կադրային բանկ՝ տարբեր ոլորտների առաջատար՝ բանիմաց

մասնագետներից կազմված: Վստահ եմ, որ նրանց գիտելիքների նպատակային օգտագործման դեպքում մենք կարող ենք արձանագրել ավելի մեծ հաջողություններ:

2. Պաշտոնյա և կուսակցական հասկացողությունները շատերի մոտ ճիշտ չեն ընկալվում:Եթե կուսակցականը պաշտոնյա է, դեռևս չի նշանակում, որ նա «անձեռնմխելի» է և կուսակցկան պարտավորություններ չունի: Ավելին, նա ունի կրկնակի պարտականություն՝ համակուսակցական և տարածքային կուսակցական: Տվյալ անձը նախ պետք է լինի որևէ տարածքային կազմակերպության անդամ և իր կուսակցական գործունեության համար պետք է նաև հաշվետու լինի այդ տարածքային կազմակերպությանը ու իր գործունեությամբ նպաստի նրա աշխատանքներին:
3. Եվ վերջապես ցանկլի է ավելի հստակեցնել և ուժեղացնել կենտրոնական գրասենյակ – տարածքային կազմակերպություն՝ ուղղահայաց, ինչպես նաև, հատկապես, տարածքային կազմակերպությունների միջև հորիզոնական կապերը:

Հարգելի Հանրապետականներ,

«Կենտրոն» տարածքային կազմակերպության խորհուրդը քննարկել է կուսակցության կանոնադրական փոփոխությունները, և համարում է այն դրական, հատկապես ողջունելի են խորհրդի ներսում գործադիր մարմին ունենալու, ինչպես նաև կուսակցության նախագահի ինստիտուտ մտցնելու և նրա ընտրությունը համագումարի կողմից իրականացնելու գաղափարները: Կանոնադրական փոփոխությունների նախագծունմ կարևորում ենք նաև մարզային կառույցների կարգավիճակի մեծացման հարցը:

Եվ վերջում, կանխավ շնորհավորելով Ձեր Ամանորը և Սուրբ Ծնունդը, ցանկանում եմ նշել, որ եկող տարի մենք Ձեզ հետ միասին մեծ աշխատանքներ ունենք անելու, այն է 2007 թվկանի խորհրդարանական ընտրություններին նախապատրաստվելը, որը մեզ համար լինելու է խիստ վճռորոշ:

Հաջողություն եմ մաղթում բոլորիս այդ կարևոր գործում:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀՀԿ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ 9-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

ՀՀԿ 8-րդ համագումարից հետո ընկած ժամանակահատվածում ՀՀԿ վերստուգիչ հանձնաժողովի ուշադրության կենտրոնում է եղել կուսակցության ֆինանսատնտեսական գործունեությունը: Հաշվետու ժամանակահատվածում կուսակցության ֆինանսատնտեսական գործունեությունը ներկայացնում է հետևյալ պատկերը դրամներով՝

բանկի մնացորդ	8 մլն 766 հազ
դրամարկղի մնացորդ	12 մլն 486 հազ
մնացորդ առ 12.07.2003թ.	**21 մլն 252 հազ**
անդամավճարներ	41 մլն 228 հազ
նվիրատվություն	40 մլն 781 հազ
բյուջեից հատկացումներ	47 մլն 640 հազ
անշարժ գույքի վաճառքից	5 մլն
ստացված վարձավճարներ	4 մլն 568 հազ
ընդամենը մուտք	**139 մլն 217 հազ**
ԸՆԴԱՄԵՆԸ	**160 մլն 469 հազ**

Ծախսերի հիմնական հոդվածներն են

1. էլեկտրաէներգիա 5 մլն 157 հազ
2. հեռախոսի վարձ 20 մլն 161 հազ
3. ջրի վարձ 641 հազ
4. գազի վարձ 51 հազ
5. հեռահաղորդակցության ծախսեր 3 մլն 152 հազ
6. շենքի տարածքի վարձակալություն 5 մլն 747 հազ
7. շենքի տարածքի ձեռքբերում /սեփականություն/ 34 մլն 702 հազ
8. հիմնական միջոցներ 4 մլն 720 հազ
9. աշխատավարձեր 12 մլն 402 հազ
10.սեմինարների կազմակերպման և հյուրանոցի ծախսեր 8 մլն 241 հազ
11. գովազդային ծախսեր 3 մլն 542 հազ
12. Թղթապանակ., բլոկնոտներ, գրենական պիտույքներ 4 մլն 289 հազ

13. կրծքանշանների պատրաստման համար	802 հազ
14. վկայականների պատրաստում	2 մլն 600 հազ
15. ռադիոհաճախականության վճար	336 հազ
16. գերատեսչական ակտեր և պաշտոն. տեղեկագ.	341 հազ
17. թերթերի և ամսագրերի բաժանորդ.	1 մլն 258 հազ
18. սփյուռ տեղեկագրում գրանցման համար	153 հազ
19. հրատարակչական ծախսեր	8 մլն 773 հազ
20. հարկեր, սոց վճարներ և պետ. տուրք	10 մլն 345 հազ
21. աջակցություններ	17 մլն 516 հազ
22. այլ ծախսեր	1 մլն 762 հազ
ընդամենը ծախսեր	**147 մլն 154 հազ**

բանկի մնացորդ 7 մլն 012 հազ

դրամարկղի մնացորդ 6 մլն 303 հազ

մնացորդ առ «1» 12 2005թ. 13 մլն 315 հազ

Հաշվետու ժամանակաշրջանում հանձնաժողովի կողմից պարբերաբար կատարված ստուգումների արդյունքները ցույց են տվել, որ կուսակցության ֆինանսատնտեսական գործունեությունում խախտումներ չեն եղել:

Առաջարկում եմ հաստատել հաշվետվությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն *հեռ. 58.00.31, 56.21.51* *ՖԱՔՍ 58.12.59*
Երևան, Մելիք Ադամյան 2

N 12-008 « 17 » դեկտեմբեր 2005թ.

ՔԱՂՎԱԾՔ

Հայաստանի Հանրապետական կուսակցության 9-րդ
համագումարի արձանագրությունից

ք. Երևան 17 դեկտեմբեր
2005թ.

Հայաստանի Հանրապետական կուսակցության 9-րդ համագումարի աշխատանքին մասնակցելու համար ՀՀ բոլոր մարզերից և Երևան քաղաքից ընտրված 744 պատվիրակներից ներկա էին 662-ը, որն ընտրված պատվիրակների թվի 2/3-ից ավելին է և բավարարված է համագումարի աշխատանքն օրինական համարելու ՀՀԿ կանոնադրական պահանջը:

ՀՀԿ համագումարի նախագահության կազմում էին.

ՀՀԿ խորհրդի նախագահ Անդրանիկ Մարգարյանը

ՀՀԿ խորհրդի նախագահի տեղակալներ

Ռազմիկ Զոհրաբյանը

Տիգրան Թորոսյանը

Համագումարը նախագահում էր ՀՀԿ խորհրդի նախագահի տեղակալ Տիգրան Թորոսյանը:

Համագումարի կազմակերպչական հանձնաժողովի առաջարկով, քվեարկության արդյունքում, ընտրվեց համագումարի քարտուղարություն հետևյալ կազմով՝

1. Նավասարդյան Կարինե
2. Նաջարյան Սիրուն
3. Խալաֆյան Արմինե

Այլ առաջարկներ չեղան, բաց քվեարկությամբ քարտուղարության կազմը հաստատվեց միաձայն:

Համագումարի կազմակերպչական հանձնաժողովի առաջարկով, քվեարկության արդյունքում, ընտրվեց համագումարի հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝

1. Մուրադյան Հրաչյա
2. Պողոսյան Արմեն
3. Մկրտչյան Սոկրատ
4. Ալեքսանյան Աննա
5. Ազատյան Արմեն
6. Սարգսյան Վահրամ
7. Այդինյան Արմեն
8. Ազիզյան Արմեն
9. Պողոսյան Սամվել Սուրենի

Այլ առաջարկներ չեղան, բաց քվեարկությամբ հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատվեց միաձայն:

Նախագահող Տիգրան Թորոսյանը ներկայացրեց ՀՀԿ 9-րդ համագումարի օրակարգի նախագիծը և առաջարկեց հաստատել այն:

ՀՀԿ խորհրդի նախագահ Անդրանիկ Մարգարյանը ներկայացրեց ՀՀԿ խորհրդի հաշվետվությունը:

Համագումարը բաց քվեարկությամբ միաձայն հաստատեց ՀՀԿ խորհրդի հաշվետվությունը:

ՀՀԿ վերստուգիչ հանձնաժողովի հաշվետու զեկույցը ներկայացրեց ՀՀԿ վերստուգիչ հանձնաժողովի նախագահ Անահիտ Կիրակոսյանը:

Համագումարը բաց քվեարկությամբ միաձայն հաստատեց ՀՀԿ վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը:

Ելույթներ ունեցան ՀՀԿ խորհրդի նախագահի տեղակալ Տիրան Թորոսյանը, ՀՀԿ խորհրդի անդամ, ԱԺ «Հանրապետական» խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանը, ՀՀԿ կազմակերպչական հանձնաժողովի նախագահ Ռուբեն

Թադևոսյանը, ՀՀԿ «Կենտրոն» տարածքային կազմակերպության նախագահ Դերենիկ Դումանյանը, ՀՀԿ Արագածոտնի մարզային կազմակերպության նախագահի տեղակալ Սարգիս Սահակյանը, Արմավիրի տարածքային կազակերպեության նախագահ Փառանձեմ Կարապետյանը, ՀՀԿ Երիտասարդական կազմակերպության ներկայացուցիչ, ԱԺ պատգամավոր Արմեն Աշոտյանը, ՀՀԿ Գեղարքունիքի մարզային կազմակերպության նախագահ, ԱԺ պատգամավոր Ռաֆիկ Գրիգորյանը:

ՀՀԿ կանոնադրությունը «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքին համախատասխանեցնելու, ինչպես նաև կուսակցության գործունեությունն ավելի նպատակային և արդյունավետ դարձնելու համար ՀՀԿ կանոնադրության մեջ կատարվիք փոփոխությունների և լրացումների նախագիծը ՀՀԿ խորհրդի անդամ Սամվել Նիկոյանը ներկայացրեց համագումարին և առաջարկեց հաստատել այն:

Համագումարը բաց քվեարկությամբ միաձայն հաստատեց ՀՀԿ կանոնադրական փոփոխությունների նախագիծը:

Համագումարի կողմից հաստատված ՀՀԿ կանոնադրության համաձայն, Նախագահողն առաջարկեց ընտրել ՀՀԿ նախագահ և ՀՀԿ խորհուրդ:

Առաջարկվեց հաստատել ՀՀԿ խորհուրդ՝ 42 անդամով, ընդ որում կուսակցության մարզային խորհրդի նախագահները խորհրդի կազմում ընդգրկվում են ի պաշտոնե: Ունենք 10 մարզային խորհուրդներ: Կուսակցության նախագահն ի պաշտոնե կուսակցության խորհրդի անդամ է: Հաշվի առնելով կանոնադրական վերոհիշյալ պահանջները կազմակերպչական հանձնաժողովն առաջարկում է կուսակցության խորհրդի կազմում ընտրել ևս 31 անդամ::

Բաց քվեարկության արդյունքում հաստատվեց ՀՀԿ խորհրդի անդամների թիվը՝ 42 հոգի:

Հայաստանի Հանրապետական Կուսակցության նախագահի պաշտոնում առաջադրվեց Անդրանիկ Մարգարյանը:

Հաշվիչ հանձնաժողովը ներկայացրեց փակ քվեարկության արդյունքները.

Համագումարին մասնակից-գրանցված 662 պատվիրակներից ընտրություններին մասնակցել էր 639-ը:

639 կոմղ, 0 դեմ, 0 ձեռնպահ – Հայաստանի Հանրապետական Կուսակցության նախագահ ընտրվեց ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԸ:

ՀՀԿ խոհուրդ ընտրվեց փակ քվեարկությամբ հետևյալ կազմով.

1. Թորոսյան Տիգրան – 639 կողմ, 0 դեմ
2. Զոհրաբյան Ռազմիկ Արտավազդի – 639 կողմ, 0 դեմ
3. Սահակյան Գալուստ Գրիգորի – 639 կողմ, 0 դեմ
4. Բաղալյան Գառնիկ Ժորայի – 639 կողմ, 0 դեմ

5. Գագյան Գագիկ Սիմոնի – 639 կողմ, 0 դեմ
6. Զադոյան Դավիթ Մնացականի – 638 կողմ, 1 դեմ
7. Լալայան Մուշեղ Արծրունու – 637 կողմ, 2 դեմ
8. Խաչիկյան Վազգեն Յուրիկի – 636 կողմ, 3 դեմ
9. Կարախանյան Վազգեն Ղուկասի – 638 կողմ, 1 դեմ
10. Մանուկյան Սերգեյ Լևոնի – 639 կողմ, 0 դեմ
11. Մինասյան Գագիկ Ենգիբարի – 639 կողմ, 0 դեմ
12. Մկրտչյան Մկրտիչ Էմիլի – 639 կողմ, 0 դեմ
13. Մալխասյան Արարատ Ցոլակի – 638 կողմ, 1 դեմ
14. Մարտիրոսյան Ռազմիկ Մարտիրոսի – 639 կողմ, 0 դեմ
15. Մելիքյան Գագիկ Վաղինակի – 634 կողմ, 5 դեմ
16. Նիկոյան Սամվել Պարգևի – 638 կողմ, 1 դեմ
17. Թադևոսյան Ռուբեն Հրաչիկի – 638 կողմ, 1 դեմ
18. Աղաբաբյան Աշոտ Սերյոժայի – 638 կողմ, 1 դեմ
19. Ավետիսյան Արա Սերգեյի – 638 կողմ, 1 դեմ
20. Աբրահամյան Հովիկ Արգամի – 639 կողմ, 0 դեմ
21. Ճշմարիտյան Կարեն Յուրիկի – 636 կողմ, 3 դեմ
22. Մովսիսյան Արմեն Խիկարի – 638 կողմ, 1 դեմ
23. Այվազյան Վարդան Սուրենի – 635 կողմ, 4 դեմ
24. Թոփուզյան Մանուկ Լևոնի – 638 կողմ, 1 դեմ
25. Աշոտյան Արմեն Գևորգի – 637 կողմ, 2 դեմ
26. Զաքարյան Արտակ Բորիսի – 638 կողմ, 1 դեմ
27. Ավագյան Կարեն – 638 կողմ, 1 դեմ
28. Գրիգորյան Արտակ Աշոտի – 639 կողմ, 0 դեմ
29. Մամիկոնյան Վահան Սասնիկի – 639 կողմ, 0 դեմ
30. Դումանյան Դերենիկ Հրանտի – 639 կողմ, 0 դեմ
31. Հակոբյան Արա Լևոնի – 639 կողմ, 0 դեմ
32. Խաչատրյան Սուրեն – ի պաշտոնե
33. Թարվերդյան Սամվել Պողոսի – ի պաշտոնե
34. Ալեքսանյան Լեռնիկ Ռաֆիկի – ի պաշտոնե
35. Խաչատրյան Գագիկ Մկրտիչի – ի պաշտոնե
36. Գրիգորյան Ռաֆիկ Խորենի – ի պաշտոնե
37. Քոչինյան Հենրիկ Զումշուդի – ի պաշտոնե
38. Վարդանյան Միքայել Հովհաննեսի – ի պաշտոնե
39. Ղուլարյան Արմեն Հրանտի – ի պաշտոնե

40. Գևորգյան Նահապետ Բագրատի – ի պաշտոնե
41. Բակլաչյան Վալերի Արտավազդի – ի պաշտոնե

Առաջարկվեց հաստատել ՀՀԿ վերստուգիչ հանձնաժողովի թիվը՝ 7 անդամ, հետևյալ կազմով.

1. Կիրակոսյան Անահիտ
2. Հովհաննիսյան Վեմիր
3. Առաքելյան Գագիկ
4. Հայրապետյան Մարինե
5. Ալեքսանյան Արմեն
6. Սահակյան Կամո Ժորժիկի
7. Կարապետյան Արամ Թաթուլի

Բաց քվեարկության արդյունքում միաձայն հաստատվեց ՀՀԿ վերստուգիչ հանձնաժողովի անդամների թիվը՝ 7, և առաջադրված կազմը:

Տեղի ունեցավ ՀՀԿ նորընտիր խորհրդի առաջին նիստը: Խորհուրդը լիազորեց ՀՀԿ նախագահ Անդրանիկ Մարգարյանին ծանոթանալ և ստորագրել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

ՀՀԿ նախագահի տեղակալներ ընտրվեցին.

Ռազմիկ Զոհրաբյան – կազմակերպչական գծով

Տիգրան Թորոսյան – քաղաքական գծով

Մուշեղ Լալայան - գաղափարական գծով: